ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ
ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

SUPREME PATRIARCH
CATHOLICOS
OF ALL ARMENIANS
MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN

Ն.Ս.Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՊԱՏԳԱՄԸ ՍՈՒՐԲ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏՕՆԻ ԱՌԻԹՈՎ

(Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2002 թ. մարտի 31)

«Եւ ուր երթամն՝ գիտիցէք, և զճանապարհն գիտիցէք:
... Ես եմ ճանապարհն և ճշմարտութիւն և կեանք»
(Յովհ. 14. 4-6):

Սիրելի ժողովուրդ հայոց.

Յարութեան ողջունաբեր առաւօտ է: «Երկիրը լցուել է Տիրոջ ողորմութեամբ» *(Սղ. 118. 64)*: Յարութեան ու կեանքի յաղթութեան հաւատով, յոյսով ու լաւատեսութեամբ են համակուած մեր հոգիները՝ հաղորդ «Ես եմ ճանապարհը և ճշմարտութիւնը և կեանքը» *(Յովհ. 14. 4-6)* Բանին Կենաց Աստուածայայտնութեան խօսքին:

Քրիստոսի սքանչելագործ Յարութեան խորհրդով մենք ապրում ենք այն մխիթարութիւնը, որ Աստուած չթողեց իր արարածներին մեղքի հետ միայնակ, կորստեան ճանապարհին, այլ շարունակ յայտնուեց մարդկութեանը նահապետների և մարգարէների միջոցով, իսկ ի լրումն ժամանակի մարմին առաւ ու բնակուեց մարդկանց մէջ:

Մէկ այլ աշխարհի՝ խաղաղ ու եղբայրասէր, Աստուծոյ հետ հաշտ՝ փրկուած աշխարհի սէրը մարդկանց հոգիներում սերմանելու առաքելութեամբ եկաւ Քրիստոս, եկաւ խաչի վրայ անարատ Իր արեան հեղմամբ մեղքն ու մահը խորտակելու յանձնառութեամբ: «Սիրեց իւրայիններին, ... իսպառ սիրեց նրանց» *(Յովհ. 13.1)*, – ասում է առաքեալը: Փրկչի իսպառ այդ սիրով գծուել է Գողգոթայի խաչելութեան ուղին և փայլատակել է Յարութեան Լոյսը՝ իբրև սիրոյ ու բարու յաղթութեան ճշմարտութիւն, իբրև քաւութիւն ու ներում, իբրև հաշտութիւն:

Այսօր մենք՝ ում նոյնպէս իսպառ սիրեց Քրիստոս, կանգնած ենք թափուր գերեզմանի առջև, որի դռնից քարը մեզ համար մի կողմ է գլորուած: Գերեզմանից անդին մահուան ստուերից զերծ ճանապարհն է, և Յարուցեալ Քրիստոս ծայնում է մեզ. «Եւ թէ ուր եմ գնում, այդ գիտէք, գիտէք և ճանապարհը: ... Ես եմ ճանապարհը և ճշմարտութիւնը և կեանքը» *(Յովհ. 14. 4-6)*:

Սիրելի բարեպաշտ հաւատացեալներ.

Աստուծոյ Միածին Որդու փրկագործական առաքելութեամբ շնորհն ունենք ճշմարտութիւնը ճանաչելու, գտնելու կեանքի իմաստն ու նպատակը, երջանկութեան ճանապարհը: Ճշմարտութիւնը և կեանքը մեր հոգիներից պիտի

digitised by A.R.A.R.@

բխեն: Քրիստոսին սիրող հոգիներից, որ հաւատում են Նրա Խօսքին՝ Սուրբ Աւետարանին, վստահում Նրա Յարութեանը ու Նրա աստուածային ներկայութեանը մեր մէջ, կեանքի յաւիտենութեանը, քրիստոնէական բարոյական արժէքների կենսահաստատ ուժին: Մեր ամեն խօսք և գործ կամ վաճառում է ճշմարտութիւնը, կամ հաստատում այն: Կամ խոցում է դիմացինի սիրտը, կամ ամոքում ու մխիթարում, կամ աւերում է, կամ կառուցում, կամ խաւար է ծնում, կամ լոյս: Չլինենք ճշմարտութեան վաճառողներ այն զինուորների պէս, որ կաշառուեցին ու սուտ վկայութիւն տուեցին, թէ աշակերտներն են տարել Յիսուսի մարմինը, այլ անկաշառ հոգով, արդար սրտիւ և Յարութեան անխառն հաւատով մեր եկեղեցու խորաններում հաղորդուենք Աստուծոյ Միածին Որդու կենդանարար մարմնին ու արեանը: Ով ճանաչել է ճշմարտութիւնը, խաւարը չի ցանկայ: Ով քայլել է ճշմարտութեան ճանապարհով, խաւարում չի դեգերի: Մեր ճանապարհը Հայոց Մի, Առաքելական Սուրբ Եկեղեցին է՝ Յարուցեալ Քրիստոս քարոզող, Յարութեան հաւատի մէջ, Յարութեան ճանապարհին մեզ հաստատող ու ապրեցնող:

Սիրելի ժողովուրդ հայոց, յարութեան նոր արշալոյս է բացուած ի Հայաստան, Արցախ և ի Սփիւռք՝ ներշնչուն նոր կեանքի սպասումով՝ առաքինութեամբ շէնշող, ապահով, բարօր ու երջանիկ կեանքի: Երբ յարութեան նոր առաւօտ է հայ իրականութեան մէջ, չերկնչենք մեր Հայրենիքում իրաւունք և օրինականութիւն պաշտպանելու, արդարութիւն և ճշմարտութիւն հաստատելու: Դառնանք դէպի Յարութեան անստուեր լոյսը, բացենք մեր հոգին մեզ նորոգող ու փրկող Յարուցեալ Քրիստոսի առջև: Երբ յարութեան նոր առաւօտ է, ինչպէ՞ս լռութեամբ անցնենք կեղծիքի կողքով և անտարբերութեամբ ու անփութութեամբ թոյլ տանք, որ մեր կեանքը դառնայ կեղծ արժէքների ու գաղափարների, անօրէն գործարքների վաճառատեղի: Քրիստոնէական բարոյականի վերածնունդը այսօր համազգային խնդիր է և իւրաքանչիւրիս մտահոգութեան առարկայ, քանզի առանց սիրոյ, առանց ազնուութեան, արդարամտութեան ու օրինաւորութեան միայն կարճատև կարող են լինել բոլոր ծեռքբերումներն ու յաջողութիւնները, տնտեսութիւնը՝ զուրկ ազատ ու ներդաշնակ զարգացումից, գիտութիւնը՝ հեռու կեանքի առաջընթացին ծառայելու իր կոչումից, արուեստը՝ անհոգի ու միայն նմանակող: Առանց Փրկչի ոչինչ յարատև ու երջանկաբեր չենք կարող ստեղծել: Քրիստոս է ճանապարհը, «աղբիւր կենաց և բաշխող շնորհաց». «...ով Ինձ հաւատում է, ինքն էլ կանի այն գործերը, որ Ես եմ անում» (*Յովհ. 14.12*),– ասում է Տէրը: Լաւը լաւ կոչող, վատը՝ վատ, բարին չարից տարբերող գործերն են դրանք, տեսիլքով ներշնչուն արութեան գործերը, յաղթանակող, հրաշածին, անհնարինը հնարաւոր դարձնող ու յարութեամբ շնչող գործերը:

Փրկչի ուղենշած, Նրա արեամբ հարթուած, Նրա սիրով ծաղկուն յարութեան ճանապարհով պիտի վերածնուի Հայաստանը, ճշմարտութեամբ պիտի զօրեղ լինի, լեցուն կեանքով ու երջանկութեամբ, երկիր դրախտավայր՝ աշխարհասփիւռ ողջ հայութեան համար ոչ միայն պատմական Հայրենիք, այլ տուն հայրական, որ հաւաքում է մեզ տապանակիր Արարատի շուրջ, Միածնակառոյց Սուրբ Էջմիածնի հովանու ներքոյ:

Աշխարհի բոլոր կողմերում Յարութեան հաւատով արձագանքենք «Հայաստան – Սփիւռք» միաբանութեան նոր ուխտի հրաւէրին և Տիրոջով ուրախ, Տիրոջով վստահ ու քաջեռանդ՝ ծեռնամուխ լինենք հայոց անկախ պետականութեան՝ մեր նոր կեանքի կառուցմանը: Նոր լոյսեր վառենք ազգային միութեան մեր Սուրբ Տաճարում, վստահենք մեր զօրութեանը Քրիստոսով, սիրենք

digitised by A.R.A.R.@

մեր միաբանութիւնը՝ ամբողջ, պայծառ պահելով Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին, ուր բնակուում է Աստուած Իր օրհնութեամբ, յարութիւն ճառագող Իր ճշմարիտ զօրութեամբ, որը զարթօնքով է լցրել հայ կեանքի անդաստաններն ամենուր՝ նոր կենսաւիշ հաղորդելով կեանքի յաղթութեան հաւատով ապրող ու արարող Ազատ Արցախին և Հայոց Սփիւռքին:

Ապրենք Քրիստոսով, և մեր կեանքը միշտ կլինի յարութեան ողջունաբեր առաւօտ:

Ամենայն Հայոց Միածնաէջ Մայր Աթոռից «յարեաւ Քրիստոս» մեծասքանչ աւետիսն ենք յղում և Հայրապետական Մեր ջերմ ողջոյնը բերում Առաքելական մեր եկեղեցու Նուիրապետութեան Աթոռների շնորհազարդ գահակալներին՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Ն.Ս.Օ. Տ. Տ. Արամ Ա Կաթողիկոսին, Երուսաղէմի Հայոց Ամենապատիւ Պատրիարք Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեանին, Կոստանդնուպոլսոյ Հայոց Ամենապատիւ Պատրիարք Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոս Մութաֆեանին:

Յարութեան բարի աւետիսով Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք բերում ուխտապահ ու նուիրեալ ողջ հոգևոր դասին, հաւատաւոր համայն մեր ժողովրդին ի Հայաստան, Արցախ և ի Սփիւռս:

Յարութեան օրհներգութիւնը Մեր շուրթերին, ողջունում ենք հայոց պետական աւագանուն՝ գլխաւորութեամբ ՀՀ Նախագահ Տիար Ռոբերտ Քոչարեանի և Հայաստանում հաւատարմագրուած դիւանագիտական առաքելութիւնների ղեկավարներին ու ներկայացուցիչներին:

Ի Քրիստոս սիրոյ եղբայրական Մեր ողջոյնն ենք յղում քոյր եկեղեցիների հոգևոր պետերին և Յարուցեալ Փրկչի առատաբաշխ շնորհները հայցում Քրիստոսի հաւատաւոր հօտին, համայն աշխարհին: Քրիստոս յարեաւ: Քրիստոսով յարուցեալ ու նորոգ են մարդն ու տիեզերքը: Չկայ մահ՝ «Նա ամեն ինչ հաստատել է լինելու համար, և աշխարհի գործերը փրկութեան համար են» (*Իմաստ. Սղ. 1.14*):

Քրիստոսի Յարութեամբ բացուել է կեանքի ճանապարհը: Մերն է ընտրութիւնը նոր այգաբացին մարդկութեան երրորդ հազարամեակի և հայոց նորանկախ պետականութեան. «Եւ թէ ուր եմ գնում, այդ գիտէք, գիտէք և ճանապարհը»... :

Քրիստոս յարեաւ ի մեռելոց,
Մեզ, ձեզ մեծ աւետիս:

digitised by A.R.A.R.@